ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՄԲ

ԱՌԱՐԿԱ ԴԱՍՎԱՐ (ՄԱՅՐԵՆԻ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱ)

ՀԵՂԻՆԱԿ Կարինե Պողոսյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Գորիսի թիվ 3 հիմնական դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. Ս. Ալավերդյան, ԳՊՀ դասախոս

ԳՈՐԻՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……....3

Կրտսեր դպրոցականի անձնավորության զարգացումը շրջակա միջավայրի ազդեցությամբ……..5

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի ազդեցությունը կրտսեր դպրոցականի անձի զարգացման և դաստիարակության վրա……8

Եզրակացություններ……..14

Օգտագործած գրականության ցանկ……..15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Կրտսեր դպրոցականների ընկալման ամբողջականությունը լիովին կարող է դրսևորվել ուսումնական գործունեության գործընթացում: Ուսումնական գործունեությունը անհատական ակտիվության յուրահատուկ ձև է՝ իր կառուցվածքով բարդ, և հատուկ ձևավորում է պահանջում: Ուսումնական գործունեության մեջ կրտսեր դրպոցականը ոչ միայն յուրացնում է գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, այլև սովորում է՝ իր առջև դնել ուսումնական խնդիրներ(նպատակներ), որոնել և գտնել գիտելիքների յուրացմանն կիրառման եղանակները, ինչպես նաև վերահսկել և գնահատել սեփական գործողությունները:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ցույց տալ <<Ես և շրջակա աշխարհը>> առարկան յուրացնելուց հետո սովորողների մոտ ձևավորվող հիմնական կարողությունները՝

- շրջապատում տեսնել,առանձնացնել, ձևակերպել օրինաչափությունները.
- բացատրել օրինաչափությունները, հանգել օրենքների, սեփական փորձով հայտնաբերած օրենքները կիրառել.
- աշակերտը պետք է ուսումնասիրի և հասկանա շրջակա աշխարհում տեղի ունեցող երևույթները:

Աշխատանքի խնդիրներն են՝ <<Ես և շրջակա աշխարհը>> առարկան յուրացնելուց հետո սովորողների մոտ **բացահայտել** առանձնահատկություններ, որոնց շնորհիվ նրանք կկարողանան

- վերհիշել կամ ճանաչել կարևոր տեղեկություններ, հիմնական սահմանումներ, տերմինաբանություն և փաստեր,
- բացատրել տվյալները սեփական բառերով, ընկալել, թե այս տվյալները ինչ կապ ունեն այլ հիմնական փաստերի հետ, և առաջարկել դրանց իմաստի կամ կարևորության լրացուցիչ մեկնաբանություններ,

- դասակարգել և համադրել կարևոր տեղեկությունները, փաստերն ու սկզբունքները՝ նոր գաղափար, ծրագիր, կարգ կամ արդյունք ստեղծելու համար,
- դատողություններ անել տեղեկությունների մասին՝ դրանց ճշգրտության, հստակության, հետևողականության և արդյունավետության տեսակետից:

Հետազոտության տեսական նշանակությունն է վերլուծել կարևոր փաստերի և սկզբունքների չերևացող մանրամասները, ընկալել հիմնական կապերն ու օրինաչությունները, որոնք ոչ միշտ են տեսանելի:

Հետազոտության գործնական նշանակությունն է սովորեցնել փաստերը կամ սկզբունքները կիրառել նոր խնդիրների կամ իրավիճակների նկատմամբ՝ հասկանալով, թե ինչ տեղեկություններ են պետք որոշակի իրավիճակի համար, դրանց օգնությամբ բացատրել նոր երևույթ և որոշել, թե արդյոք կան բացառություններ:

Կրտսեր դպրոցականի անձնավորության զարգացումը շրջակա միջավայրի ազդեցությամբ

Կրտսեր դպրոցականի անձի ձևավորման գործում շրջակա միջավայրի դերն անփոխարինելի է. մարդը չի կարող կայանալ, եթե չի ապրում մարդկային հասարակության մեջ և այլ մարդկանց հետ: Մարդը հասարակական էակ է, և ինչպես արտահայտվել են մանկավարժության դասականները՝ բոլոր հասարակական հարաբերությունների հանրագումարը: Իհարկե, գիտությանը շատ փաստեր են հայտնի, երբ երեխան դաստիարակվել է կենդանիների կողմից, բայց և նրանցից ոչ մեկը մարդ չի դարձել: Որպեսզի մարդկության ժառանգական ավանդները (լեզու, մտածողություն, երևակայություն, կանխատեսում) գլուխ բարձրացնեն, անհրաժեշտ են համապատասխան նախադրյալներ և պայմաններ(հաղորդակցում, խաղային գործունեություն հասակակիցների հետ, ընտանեկան միջավայր, հատուկ մարդկային>> ուսուցում և փորձի փոխանակում): Մարդը ծնվում է որպես կենսաբանական էակ, իսկ աճում ու զարգանում է որպես կոնկրետ հասարակության և կոլեկտիվի անդամ: Եվ այս դեպքում նմանակումը որպես մարդու կենսաբանական ունակություն դառնում է նրա սոցիալական զարգացման պայմանը: Ֆրանսիացի գրող Լարուշֆուկոն պատկերավոր ասել է, թե օրինակը վարակիչ է. դրա համար մարդկային ցեղի բոլոր բարերարներն ու ոճրագործները նմանակներ են գտնում: <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի դասաժամերին կրտսեր դպրոցականները սկսում են հասկանալ, որ շրջապատի մարդկանց, հասակակիցների, ընտանիքի անդամների հետ շփումը, համատեղ աշխատանքը, խաղը, ուսուցումը անհրաժեշտ են անձի բարեհաջող զարգացման և կայացման համար:

<<Շրջակա միջավայր>> հասկացության մեջ մտնում են մարդկանց կյանքի պայմանները, սոցիալական և հասարակական կարգը, ընտանիքում և դպրոցում (հասակակիցներին ուսուցիչների հետ) մարդու փոխհարաբերությունների բնույթը: Աճող ու զարգացող երեխան գտնվում է այն բոլոր փոփոխությունների ազդեցության տակ, որոնք տեղի են ունենում հասարակության մեջ՝ իր աչքի առաջ: Իսկ տարբերակել մարդկային հասարակության և մարդկային փոխհարաբերությունների ճիշտ և սխալ կողմերը՝ կրտսեր դպրոցականը նոր է սովորում: Նրա արժեհամակարգի ձևավորման համար չափազանց կարևոր է նաև ընտանիքի,

դպրոցի, դասարանի դերը: Մանկավարժը պարտավոր է իմանալ իր աշակերտի ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները, նրա տողը ընտանիքում, հարաբերությունները ընտանիքի անդամների և ընկերների հետ:

Դպրոց ընդունվելու հետ երեխայի շրջակա միջավայրի հետ փոխհարաբերությունների համակարգում նոր սոցիալական միջավայրը դառնում է գերակա: Հոգեբանները հաստատում են , որ դպրոցին հարմարվելու շատ խնդիրներ պայմանավորված են ոչ թե երեխայի ինտելեկտուալ անպատրաստության, այլ հասակակիցների հետ հարաբերություններ ստեղծել չկարողանալու, ուսուցչի պահանջները ընդունելու և կատարելու ունակությունների, երկխոսության մեջ մտնելու պակասի հետ: Հենց այս պատճառով է, որ այսօր շատ է խոսվում անձնակենտրոն ուսուցման մասին, որը ենթադրում է ցանկացած անձնավորության նկատմամբ ուշադիր և զգույշ վերաբերմունք, անհատականության հաշվի առնում և երեխայի իրավունքը լինելու այնպիսին, ինչպիսին ինքը կա:

Դպրոց ընդունվելը բեկումնային պահ է երեխայի կյանքում, քանի որ այս շրջանում է անցում կատարվում սոցիալական նոր դերին, պայմաններին և գործառույթներին, շրջակա միջավայրին հարմարվելուն:

Կրտսեր դպրոցականի համար առաջատար է դառնում գործունեությունը, որն էական փոփոխություններ է մտցնում նրա վարքի դրդապատճառներում: Երեխայի համար բացվում են իմացական և բարոյական ուժերի զարգացման նոր աղբյուրներ: Դպրոցում լինելու առաջին օրերն ու շաբաթները նոր իրադրության մեջ մտնելու, ուսուցիչների և աշակերտների հետ հարաբերությունների նոր համակարգ հաստատելու, վարքի կանոնները յուրացնելու, առաջին հաջողությունների և անհաջողությունների օրեր են, որոնք վճռորոշ նշանակություն ունեն դպրոցական կյանքի ամբողջ համակարգի յուրացումը, էապես պայմանավորում է ուսուցման հետագա ընթացքը և երեխայի անձնավորության ու նրա իմացական կարողությունների ձևավորումը:

Կրտսեր դպրոցականի հետ ուսումնական հաղորդակցման մեջ մտնելիս ուսուցիչը պետք է հիշի, որ իր օրինակը կարող է լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական: Կրտսեր դպրոցականի համար ուսուցիչը հեղինակություն է, որին ինքը

փորձում է նմանվել, այդ պատճառով էլ դասարանում հարմարավետ միջավայր ստեղծելը, որը հենվում է փոխհասկացողության վրա, ամենակարևորներից է կրտսեր դպրոցում:

Շրջակա միջավայրի դասերը այս խնդրի լուծման մեջ կարող են մեծ ներդրում ունենալ: Կարելի է առանձնացնել ուսումնական հաղորդակցման կազմակերպման մի քանի պայմաններ, որոնք դրականորեն կազդեն կրտսեր դպրոցականի անձի ձևավորման վրա:

1. Երեխայի գործունեությունը պետք է լինի հաջողակ. մի առաջարկեք նրան մասնակցություն այնպիսի գործունեության մեջ, որտեղ այսօր ինքը գլուխ հանել չի կարող: Եթե ուսուցիչը գիտե, որ տվյալ հարցի պատասխանը գրատախտակի մոտ գտնվող երեխայի համար շատ է բարդ, ավելի լավ է այն կատարել գրավոր և ուսուցչի հետ. դասարանի մոտ պետք չէ նրան անհարմար վիճակի մեջ դնել:

2. Յուրաքանչյուրին հնարավորություն տվեք արտահայտելու սեփական կարծիքը:

3. Դրական օրինակների վրա հենվեք. երբեք մի քննարկեք համադասարանցիների հետ աշակերտներից որևէ մեկի սխալ արարքը(դա միայն տվյալ երեխայի հետ քննարկելու թեմա է): Հիշեք, որ համադասարանցիների ՝դատից՝ հետո երեխան չի վերադաստիարակվելու. նրա գործողությունները կարող են դառնալ զգույշ, թաքուն, բայց ոչ ճիշտ:

4. <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի ժամերին մի շտապեք գնահատականներ դնել: Ստեղծագործական աշխատանքները երբեք նիշերով մի գնահատեք. ավելի ընդունելի է ոգևորել բառերով: Երեխաների ներշնչեք, որ ստեղծագործական աշխատանքները պետք է կատարվեն ոչ թե գնահատականի, այլ ինքնաարտահայտման և հաճույքի համար: Զգտեք նիշերով գնահատել միայն կոնկրետ փաստերը, իրադարձությունները, հարցերի պատասխանները, պատմելը և այլն:

Այսպիսով, կրթության գործընթացը երկկողմանի է՝ ուսուցչի և աշակերտի ամենաանմիջական մասնակցությամբ: Նրանց ճիշտ փոխհարաբերությունից

կախված կլինի ոչ միայն ուսուցման կոնկրետ արդյունքը, այլ նաև դպրոցականի անձի ձևավորման վրա դաստիարակության ազդեցությունը:

<<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի ազդեցությունը կրտսեր դպրոցականի անձի զարգացման և դաստիարակության վրա

Այս առարկայի գլխավոր խնդիրներից է կրտսեր դպրոցականի մեջ ընդհանուր կուլտուրայի զարգացումը: Դասվարի գործունեությունը պետք է ուղղված լինի կրտսեր դպրոցականի էկոլոգիական կուլտուրայի տարրերի ձևավորմանը, բարոյական զգացմունքների զարգացմանը, ինչպես նաև հասարակական վարքի կուլտուրայի դաստիարակմանը:

Քանի որ դասերը կառուցվում են սովորողների համար կոնկրետ և մոտ նյութի հիման վրա, կարողանում են ազդել երեխաների զգացմունքների վրա, թույլ են տալիս համեմատել իրենց սեփական փորձը ձեռք բերվածի հետ, ունենալ սեփական կարծիք:

Շրջակայի դասերը հնարավորություն են տալիս զարգացնել երեխայի այնպիսի ինտելեկտուալ հատկությունները, ինչպիսիք են համեմատելու դասակարգելու, մտահանգում կատարելու ունակությունները: ՝Ես և շրջակա աշխարհը՞ առարկայի դասավանդման նպատակներից է անձնավորության հասարակական արժեք ունեցող հատկությունների ձևավորումը, բնության, մարդկանց, հասարակության մասին արժեքային պատկերացումների զարգացումը: Այդ նպատակին հասնելուն ուղղված են ինչպես դասընթացի բովանդակությունը, այնպես էլ բնության, հասարակության, մարդկանց ուսումնասիրությանն ուղղված մեթոդական բոլոր հնարները:

Կրտսեր դպրոցականի արժեքային դիրքորոշումները արտահայտվում են նրա գործունեության մեջ, նախ, ուսումնական իրադրություններում, այնուհետ նաև առօրյա կյանքում: Կրտսեր դպրոցականն իր վերլուծություններում, բացահայտումներում, շարադրություններում, պատմվածքներում արտացոլում է աշխարհում, իր սեփական երկրում տեղի ունեցող իրադարձությունները, սովորում է համեմատել իր զգացմունքային վիճակները և այլն:

Իհարկե, կրտսեր դպրոցական տարիքում նոր է զարգանում երեխայի ռեֆլեքսիան: Նրա համար, որ կրտսեր դպրոցականը կարողանա գնահատել իր գործունեության արդյունքները, որ լավագույնս ձևավորվի նրա ինքնագնահատականը և

ինքնատիրապետումը, արդեն առաջին դասարանից հատուկ վարժությունների համակարգ է մշակվում(գնահատիր, թե ինչպես ես կատարել առաջադրանքը): Աշակերտը ուշադիր կարդում է(կամ լսում ուսուցչին) խնդրի կատարման ու գնահատման բոլոր հնարավոր տարբերակները՝

- արագ, ճիշտ, ինքնուրույն
- ճիշտ, բայց դանդաղ
- ճիշտ, բայց ուրիշների օգնությամբ
- արագ, բայց ոչ ճիշտ:

Այնուհետև աշակերտն ընտրում է տարբերակներից այն, որն իր կարծիքով, համապատասխանում է իր գործունեությանը և ստացված արդյունքին: Քանի որ դպրոցականը պետք է ընտրի միայն մեկ պատասխան, դա ստիպում է նրան նախ վերլուծել բոլոր հնարավոր տարբերակները: Այս և նմանատիպ այլ վարժությունների անցկացման փորձը ցույց է տալիս, որ արդեն առաջին դասարանի վերջում երեխաները բավական օբյեկտիվ կարողանում են գնահատել իրենց գործունեությունը, ինչը թույլ է տալիս հաջորդ դասարաններում մտցնել ավելի տարբերակված գնահատականներ:

Շրջակա աշխարհը ուսումնասիրելու գուծընթացն ավելի շատ, քան կրտսեր դպրոցի մնացած բոլոր ուսումնական առարկաները, նպաստում է երեխայի խորագիտակ դառնալուն:

Առարկայի ուսումնասիրման ժամանակ սովորողները յուրացնում են բնագիտական, աշխարհագրական, կենսաբանական, հասարակագիտական և այլ հանրակրթական առարկաներից գիտելիքների բավական մեծ ծավալ: Բնության հասարակության և մարդու ուսումնասիրությունը նպաստում է բարոյական որակների ձևավորմանը, անձի կայացմանը, և կենդանի բնության նկատմաբ մարդասիրական վերաբերմունքի ձևավորմանը: Կրտսեր դպրոցականը յուրացնում է վարքի կանոններ, սովորում է փոխհարաբերվել մարդկանց հետ, ճանաչել ինքն իրեն, կառավարել սեփական վարքը:

Զարգացող երեխայի անձի ձևավորման կարևոր կողմերից է էկոլոգիական կուլտուրայի դաստիարակումը: Երեխաները ճանաչում են բնության օրենքների

այբուբենը, իմանում են կենդանական և բուսական աշխարհի փոխհարաբերության մասին, բնության նկատմամբ գիտակից, հոգատար վերաբերմունքի մասին: Ուսուցման գործընթացում մարդու բնության մեջ ունեցած վարքի գնահատման փորձ, զարգանում են կենդանիների, բույսերի խնամքի նկատմամբ կարողություններ և հմտություններ:Կրտսեր դպրոցականների գեղագիտական դաստիարակության հիմքում ընկած է այն առարկաների պատկերավոր, զգացմունքային ընկալումը, որոնք ստեղծվել են բնության և մարդու կողմից: Շրջակա աշխարհի առարկաների բազմազանությունը, շարժունությունը, գունագեղությունը ազդում են տպավորությունների կայունության վրա, իսկ զգացմունքայինի և ճանաչողականի միջև կապը դառնում է գեղագիտական զգացմունքների զարգացման կարևոր պայման:

Անընդհատ աչքի տակ ունենալով շրջակա աշխարհում տեղի ունեցող գործընթացները և փոխհարաբերվելով նրա առարկաների և երևույթների հետ, կրտսեր դպրոցականը զգայական մեծ փորձ է ձեռք բերում: Նրա մոտ ձևավորվում են վերլուծելու, պատճառահետևանքային կապեր գտնելու, դասակարգելու, համեմատելու, ընդհանրացնելու, մտահանգումներ կատարելու ունակություններ, այսինքն՝ նա սովորում է աշակերտ դառնալ:

Շրջակա աշխարհն ուսումնասիրելու գործընթացում հեշտ է ստեղծել հարցեր տալու, ենթադրություններ, կանխատեսումներ անելու համար հարմար ուսումնական իրադրություններ, որոնք հետագայում դառնում են նոր գիտելիքներ ստանալու դրդապատճառներ, տրամաբանական մտածողության և կապակցված խոսքի զարգացման կարևոր հիմք:

<<Ես և շրջակա աշխարհը>>առարկայի առաջատար նպատակներն են՝

1. Նպատակներ՝ կապված առարկայի բնագիտական բովանդակության հետ.

- բնության բազմազանության և նրանում կյանքի պայմանների մասին համակարգված գիտելիքների ձևավորումը, գ բնության նկատմամբ դրական վերաբերմունքի և էկոլոգիական կուլտուրայի ձևավորումը,
- բնության նկատմամբ հոգատար, ստեղծարար վերաբերմունքի և հմտությունների ձևավորումը:

2. Նպատակներ՝ կապված առարկայի հասարակագիտական բովանդակության հետ.

- բարոյական նորմերի, հանդուրժողականության դաստիարակումը(սերը հայրենիքի, նրա մշակույթի և պատմության նկատմամբ),
- վարքի նորմերի և մարդկային փոխհարաբերությունների դաստիարակումը,
- կարեկցանքի, փոխօգնության, ապրումակցման, ուշադրության դաստիարակությունն ու զարգացումը:

3. Նպատակներ՝ կապված առարկայի ինտեգրացիոն բնույթի և բովանդակության հետ.

- կրտսեր դպրոցականի ընդհանուր կուլտուրայի և խորագիտակության ձևավորումը,
- շրջակա աշխարհի նկատմամբ արժեքային համակարգի, բարոյական և գեղագիտական զգացմունքների զարգացումը,
- սեփական եսի՝ որպես բնության և հասարակության մի մասի գիտակցումը:

Եթե ելնելու լինենք դիդակտիկական այն սկզբունքից, որ ուսուցման նպատակները դիդակտիկական գործընթացի արդյունք են, ապա կրտսեր դպրոցականի ուսուցման գործընթացում վերոնշյալ նպատակների իրականացումը կհանգեցնի նրա անձնային նորագոյացություններին: Երեխայի անձի զարգացման այս նոր որակները կօգնեն նրան փոխհարաբերվել աշխարհի և սեփական ես-ի հետ՝դառնալով այդ փոխհարաբերությանը պատրաստ լինելու շատ կարևոր գործոններ:

Առանձնացնենք կրտսեր դպրոցականի՝ շրջակա աշխարհի հետ փոխհարաբերվելու պատրաստվածության հիմնական բաղադրիչները.

1. մտավոր պատրաստվածությունը՝ ինֆորմացիայի տարբեր տեսակների հետ աշխատելու կարողությունը, գիտելիքի կիրառումը ոչ ստանդարտ իրավիճակներում, ուսումնական խնդրի լուծման ձևերի բացահայտումը, նոր գիտելիքների ինքնուրույն հայթայթումը և դրանց տիրապետումը(տարիքային զարգացմանը համապատասխան), ճանաչողական հետաքրքրությունների զարգացման համապատասխան մակարդակը, աշակերտի աշխատելու կարողությունը

որոնումների ժամանակ, առաջարկություններ առաջ քաշելու և քննարկելու կարողություններ, փոքրիկ հետազոտություններ կատարելու ունակությունը,

2. անձնային պատրաստվածությունը՝ ինքնուրույնություն, նախաձեռնողականություն, նպատակասլացություն, դժվարությունները հաղթահարելու կամային որակներ դրսևորելու ցանկություն և կարողություն, սեփական գործունեությունը պլանավորելու և կազմակերպելու կարողություն, ուսումնական համագործակցության տարրական օրենքների իմացություն և տիրապետում,

3. հաղորդակցական պատրաստվածությունը՝ խոսքային և լեզվական միջոցներն օգտագործելու ունակությունը տեղեկատվության ստացման և հաղորդման նպատակով, ուսումնական երկխոսության մեջ մտնելու կարողությունը,

4. ռեֆլեքսային պատրաստվածությունը՝ սեփական գործունեության գնահատականը և կառավարումն իրականացնելու կարողություն, սեփական գործողությունների հետևանքները կանախտեսելու հնարավորություն, ստեղծված դժվարությունները հաղթահարելու ունակություններ, սեփական արժանապատվության գիտակցում, ուսումնական հաջողությունները օբյեկտիվորեն գնահատելու և ավելիին ձգտելու կարողություն,

5. գործունային պատրաստվածությունը՝ գործնական առաջադրանքները ուսումնականի վերածելու կարողությունը, սեփական գործունեության նախագծումը՝ սկսած նպատակադրումից մինչև արդյունքների վերլուծություն, ընտրության հնարավորության դեպքում աշխատելու կարողություն, գործողությունների ալգորիթմի կիրառման ունակություն,

6. կրեատիվ պատրաստվածությունը՝ ուսումնական խնդիրները ստեղծագործաբար լուծելու կարողությունը, օրինակից հրաժարվելու ցանկություն և կարողություն, լուծումների յուրօրինակություն ,

7. զգացմունքային պատրաստվածությունը՝ ուսումնա-ճանաչողական դրդապատճառների համակարգ և սովորելու հիմնավորված ցանկություն, տարբեր

ուսումնական իրադրությունների նկատմամբ ադեկվատ զգացմունքային ռեակցիա, զգայական փորձ ձեռք բերելու և օգտագործելու կարողություն:

Վերոնշյալ հատկանիշներից հետևում է, որ կրտսեր դպրոցականի պատրաստվածության բնույթը կախված է ուսուցման բովանդակությունից, այսինքն՝ աշակերտի վերոնշյալ հատկանիշները կարող են ձևավորվել ցանկացած դասի ժամանակ:

Արժեքային համակարգը: Ներկայացվող պահանջներն արտահայտում են սովորողի՝ որպես անձի և քաղաքացու ցուցաբերած վերաբերմունքի, դիրքորոշման, վարքի և գործելակերպի միջոցով: <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի ուսումնասիրման շնորհիվ սովորողը պետք է՝

- հետքրքրասիրություն հանդես բերի արտաքին աշխարհի նկատմամբ՝ իր ողջ բազմազանությամբ,
- հանդուրժող և բարյացակամ դիրքորոշված լինի այլ մշակույթների հանդեպ,
- կենդանի էակների հանդեպ ապրումայցում ունենա,
- գիտակցի բնական պաշարների սահմանափակ լինելը, բնության նկատմամբ պատասխանատու վարքագիծ ունենա,
- խնայողական վերաբերմունք ունենա բնական պաշարների հանդեպ,
- սիրի բնությունը, գնահատի բնության գեղեցկությունը, հոգատար վերաբերմունք ունենա նրա հանդեպ,
- սիրի հայրենիքը, պատասխանատու վարքագիծ ունենա հայրենիքի հանդեպ,
- արժևորի ընկերությունը, լինի ընկերասեր, կարևորի փոխօգնությունն ու համագործակցությունը,
- գնահատի ուրիշների աշխատանքը և հաջողությունները,
- կարևորի բարեկիրթ հաղորդակցման դերը միջանձնային հարաբերություններում, կարողանա համագործակցել,
- լինի ազնիվ, արդարամիտ, բարի, պարտաճանաչ, պատասխանատու,
- չհանդուրժի կեղծիքը, իրավունքների ոտնահարումը և անարդարությունը,

գիտակցի, որ խտրականությունն ու անարդարությունը կասեցնելու լավագույն միջոցը դրանք չհանդուրժելն է[1,81]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի ուսուցման ժամանակ կրտսեր դպրոցականի զարգացման են որոշակի բնութագրեր են ձևավորվում: Դրանք են՝

- ձեռք բերված գիտելիքները գործնականում կիրառելու կարողություններ, ուսումնական խնդիրների լուծման ռացիոնալ ձևերի ընտրություն,
- ինքնուրույն լինելու ձգտում և շրջապատող իրականության ուսումնասիրման նախաձեռնողականություն, ինֆորմացիայի համակարգման, ամբողջացման և ձեռք բերման ձևերի բացահայտում,
- ուսումնական համագործակցություն կազմակերպելու ունակություն, գործունեության մեջ գործընկերոջ ճիշտ ընտրություն, համատեղ աշխատանքի նպատակադրված ձևերի հայտնաբերում,
- սեփական թերությունների, գիտելիքի պակասի գնահատման կարողություն, սեփական սխալների պատճառների և դրանց հնարավոր շտկման ուղիների որոնում, նոր գիտելիքների ձեռք բերման անհրաժեշտության գիտակցում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1 Ալեքսանյան Լ., Թորոսյան Ն., <<Ես և շրջակա աշխարհը>>, Ուսուցչի ձեռնարկ, 2-4-րդ դասարան, Երևան, <<Մանմար>>,2013:

2 Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ս.Ս.,Մանկավարժություն, Երևան, 2004:

3 Ասատրյան Զ.Ա.,Տարրական կրթության մանկավարժություն, Երևան, 2017:

4 Ասատրյան Լ .Թ., Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքները, Երևան, <<Արտագերս>>, 2009:

5 Ասատրյան Լ .Թ., Սարգսյան Փ. Ա., Նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը Երևան, <<Զանգակ-97>>, 2002:

6 Ասատրյան Լ. Թ., Կարապետյան Ն. Զ., <<Ես և շրջակա աշխարհը>> ինտեգրված դասընթացի դասավանդման մեթոդիկա, Երևան, 2016:

7 Դ.Բ.Էլկոնին, Կրտսեր դպրոցականի ուսուցման հոգեբանություն, Երևան, 1975:

8 Տողանյան Ն.,Գյուլբուդաղյան Ա., <<Ես և շրջակա աշխարհը>>, Ուսուցչի ձեռնարկ, 2-4-րդ դասարան, Երևան, <<Մանմար>>,2013: